Տվյալ պարագայում Հայցվորի կողմից նախապես վճարվել է 50,000 ՀՀ դրամի չափով պետական տուրք, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ ելնելով բավարարված պահանջների համամասնության կարգով պետական տուրքի բռնագանձման սկզբունքից:

Բացի այդ, հաշվի առնելով, որ հայցը մերժվել է, Դատարանն արձանագրում է, որ մնացած մասով դատական ծախսի հարցը ևս պետք է համարել լուծված:

-

(IV) Եզրափակիչ մաս

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական և փաստական հիմքերը և հիմնավորումները, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 109-րդ, 179-րդ, 188-րդ 189-րդ, 191-րդ, 192-րդ և 27.2-րդ գլխով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «ԱՄՈՒՐ ԹԻԿՈՒՆՔ» փասիմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ «ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ» փակ բաժնետիրական ընկերության՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի ժ/պ-ի «Պարտադիր կատարման ցուցում թիվ 01-S գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» փաստաթուղթը անվավեր ճանաչելու (վերացնելու) անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

4. Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակման օրվանից մեկամյա ժամկետում:

Դատավոր՝ **Մալվինա Հարությունյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IEB8-7EAC-4746-B5E9 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am